Ց Ա Ն Կ
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄԻՆ ԿՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Աջակցության տրամադրման համար ներկայացվող դիմումին կցվում են՝

1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը (ներկայացուցչի կողմից դիմում ներկայացվելու դեպքում՝ ներկայացվում է լիազորողի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը և ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, ինչպես նաև ներկայացուցչի կարգավիճակը հավաստող փաստաթուղթը),

2) իրավահաջորդի կողմից դիմում ներկայացվելու դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով իրավահաջորդի կարգավիճակը հաստատող փաստաթուղթը, ինչպես նաև իրավասու մարմնի կողմից տրված փաստաթուղթ, որով հավաստվում է զոհված (մահացած) անձի մահվան պատճառական կապը՝ 2008 թվականի մարտի 1-ից 2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ ստացած վնասվածքի հետ (առկայության դեպքում), իսկ

3) առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս հասցված լինելու հանգամանքով պայմանավորված աջակցություն ստանալու նպատակով դիմում ներկայացվելու դեպքում՝ նաև առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը հաստատող դատաբժշկական փորձագետի եզրակացությունը, ինչպես նաև իրավասու մարմնի կողմից տրված փաստաթուղթ, որով հավաստվում է առողջությանը պատճառված վնասի պատճառական կապը՝ 2008 թվականի մարտի 1-ից 2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ ստացած վնասվածքի հետ (առկայության դեպքում),

4) դիմումատուի ցանկությամբ՝ այլ փաստաթղթեր: